ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ---» հոկտեմբերի 2016թ. **N--Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N451-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Լեոյի փողոցի հ. 1 շենքի հ.66՝ 75 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 12082016-01-0137 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սվետլանա Նավասարդյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ստեղծագործական արվեստանոց-բնակարան հատկացնելու խնդրանքով Երևանի քաղաքապետին է դիմել ՀՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի և միջազգային չորս մրցույթի դափնեկիր (Շումանի անվան, Ցվիկկաու, Բախի անվան, Լայպցիգ, Ելիզաբեթ թագուհու անվան, Բրյուսել, Սիդնեի միջազգային մրցույթ), «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» և «Պատվո» շքանշանակիր, «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանի ասպետ, Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսոր Սվետլանա Նավասարդյանը, որը նաև «վարպետության» դասեր է վարում Մոսկվայի, Փարիզի, Ստրասբուրգի կոնսերվատորիաներում, Ստոկհոլմի «Lilla» ակադեմիայում, Փարիզի՝ «Ecole Normale de musique de Paris» ճանաչված բարձրագույն ուսումնական հաստատությունում:

Դիմողը նշել է, որ մշտական գերծանրաբեռնվածությունը, բազմաբնույթ լարված աշխատանքը, որը պահանջում է և՛ երկարաժամյա պարապմունքներ և՛ ծայրահեղ կենտրոնացում, դժվար է իրականացնել բնակարանային ներկայիս պայմաններում: Երկար տարիներ ապրում է քրոջ և զարմիկի բազմանդամ ընտանիքի հետ միասին, ապրում՝ համերաշխ, սակայն վաղուց ի վեր հասունացել է ստեղծագործական արվեստանոց-բնակարան ունենալու խնդիրը:

Նշել է նաև, որ ստեղծագործական բազում ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ պայմանները թույլ կտան իրեն առավելագույնս բացահայտելու իր կարողությունը՝ ի նպաստ հայրենի մշակույթի:

«Կենտրոն-1» համատիրության 26.09.2016թ. տեղեկանքի համաձայն՝ Իսրայելյան փող. 37 շենքի հ. 18 բնակարանում Ս.Նավասարդյանի հետ փաստացի բնակվում է իր քրոջ՝ 5 անձից բաղկացած ընտանիքը:

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագրի վերաբերյալ» N 451-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ՝ բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի և 40-րդ կետի 4-րդ ենթակետի:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով Ս. Նավասարդյանի մեծազույն վաստակը, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը, որով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Լեոյի փողոցի հ. 1 շենքի հ.66՝ 75 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը նվիրել Ս. Նավասարդյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**